

## Ֆակտորինգ

### Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման տեղեկատվական ամփոփագիր

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորումը (այսուհետ՝ Ֆակտորինգ) իրականացվում է 2 եղանակով՝ դասական և հետադարձ ֆակտորինգի միջոցով:

#### Դասական ֆակտորինգ

Դասական ֆակտորինգը կարճաժամկետ ֆինանսավորման գործիք, որի դեպքում Ֆակտորը Հաճախորդին հանձնում է կամ պարտավորվում է հանձնել դրամական միջոցներ՝ ի հաշիվ Հաճախորդի՝ Պարտապանի նկատմամբ ունեցած դրամական պահանջի զիջման, որը բխում է Հաճախորդի կողմից Պարտապանին ապրանքներ տրամադրելուց, ծառայություններ մատուցելուց կամ Պարտապանի համար աշխատանքներ կատարելուց, իսկ Հաճախորդը Ֆակտորին զիջում է կամ պարտավորվում է զիջել այդ դրամական պահանջը:

Դասական ֆակտորինգի տարատեսակներն են.

**Փակ ֆակտորինգ**, որի դեպքում Պարտապանը չի ծանուցվում ֆակտորինգային գործարքի վերաբերյալ, և ֆակտորինգային պարտավորությունների պատշաճ կատարման պատասխանատվություն չի կրում:

**Բաց ֆակտորինգ**, որի դեպքում Պարտապանը ծանուցվում է այն մասին, որ գործարքում առկա է Ֆակտորը, և իրականացնում է բոլոր վճարումները Ֆակտորի հաշվին՝ այդպիսով կատարելով ապրանքների ձեռքբերմամբ/ծառայությունների կամ աշխատանքների ստացմամբ պայմանավորված իր պարտականությունները:

**Առանց ռեգրեսի (հետպահանջ) իրավունքի դասական ֆակտորինգ**, որի դեպքում Պարտապանի կողմից Բանկին վճարման ենթակա գումարը չվճարվելու պարագայում Հաճախորդը որևէ պարտավորություն չի կրում Բանկի հանդեպ:

**Ռեգրեսի (հետպահանջ) իրավունքով դասական ֆակտորինգ**, որի դեպքում Բանկը Հաճախորդի հանդեպ ունի ռեգրեսի իրավունք, այսինքն՝ եթե Պարտապանը չի կատարում Բանկի նկատմամբ ունեցած իր դրամական պարտավորությունները, ապա վճարումը Բանկին իրականացնում է Հաճախորդը:

#### Հետադարձ ֆակտորինգ

Հետադարձ ֆակտորինգը կարճաժամկետ ֆինանսավորման գործիք, որի դեպքում Ֆակտորը ֆինանսավորում է Հաճախորդի մատակարարներին՝ ի հաշիվ վերջիններիս՝ Հաճախորդի նկատմամբ ունեցած դրամական պահանջի զիջման, որը բխում է մատակարարների կողմից Հաճախորդին ապրանքներ տրամադրելուց, ծառայություններ մատուցելուց կամ Հաճախորդի համար աշխատանքներ կատարելուց, իսկ Մատակարարը Ֆակտորին զիջում է կամ պարտավորվում է զիջել այդ դրամական պահանջը:

**Պայմաններ**

Ֆակտորինգային ծառայությունից օգտվելու համար Պարտապանի և Մատակարարի առևտրային հարաբերությունները պետք է համապատասխանեն հետևյալ պայմաններին՝

- Պարտապանի և Մատակարարի առևտրային հարաբերությունները սկսվել են առնվազն 6 ամիս առաջ և իրականացվել է առնվազն երկու մատակարարում, որոնց դիմաց ստացվել է ամբողջական վճարում:
- Ապրանքների մատակարարումը (ծառայությունների մատուցումը) աշխատանքների կատարումը կրում են շարունակական բնույթ և չեն հանդիսանում մեկանգամյա գործարք:
- Ապրանքների մատակարարման (ծառայությունների մատուցման) աշխատանքների կատարման դիմաց ստացվելիք վճարի հետաձգման ժամկետը չի գերազանցում 120 օրը:
- Ապրանքների մատակարարման (ծառայությունների մատուցման) աշխատանքների կատարման դիմաց վճարումներն իրականացվում են անկանխիկ ձևով:

Ֆակտորինգային ֆինանսավորման արժույթ	ՀՀ դրամ
Ֆակտորինգային դիմումի ուսումնասիրության վճար, որը	15 000 ՀՀ դրամ
գանձվում է Հաճախորդից դիմումը Բանկ ներկայացնելիս	Յուրաքանչյուր Պարտապանի/Մատակարարի համար հաստատվում է առանձին ֆակտորինգային ֆինանսավորման սահմանաչափ՝ պայմանավորված Հաճախորդի և/կամ Պարտապանի վարկունակությամբ
Ֆակտորինգային ֆինանսավորման սահմանաչափ	12 ամիս
Ֆակտորինգային ֆինանսավորման սահմանաչափի առավելագույն ժամկետ	120 օր
Ֆինանսավորման ժամկետ (ֆինանսավորման տրամադրման և զիջված պահանջով պարտավորությունների կատարման միջև ընկած առավելագույն ժամկետ)	90%
Չիջված պահանջի գումարից ֆինանսավորման առավելագույն չափ (ֆինանսավորման առաջին փուլում)	Ըստ անհրաժեշտության՝ <ul style="list-style-type: none"> <li>• Շարժական և անշարժ գույք, ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած նյութական և ոչ նյութական արժեք, այդ թվում՝ գնահատման ենթակա իրավունք,</li> <li>• Երաշխավորություն</li> </ul>

## Սակագներ

Սահմանաչափի հաստատման և սահմանաչափի ավելացման միջևորդավճար	Սահմանաչափի 0.25% Նվազագույնը 5 000 ՀՀ դրամ, առավելագույնը 200 000 ՀՀ դրամ
Ֆինանսավորվող գործարքի նվազագույն գումար	Նվազագույնը 500 000 ՀՀ դրամ
Սահմանաչափի վերահաստատում	10 000 ՀՀ դրամ
Տարեկան տոկոսադրույք (հաշվարկվում է ֆինանսավորման գումարի նկատմամբ)	Սկսած 13%-ից
Միջևորդավճար (հաշվարկվում է զիջված պարտավորության գումարի նկատմամբ)	0.5 - 3% Նվազագույնը 5 000 ՀՀ դրամ
Հայտի ուսումնասիրության վճար	15 000 ՀՀ դրամ
Ծանուցման սակագին	500 ՀՀ դրամ

## Տույժեր և տուգանքներ

Տույժեր և տուգանքներ ժամկետանց գումարի դիմաց	0.2% օրական պարտավորության նկատմամբ
--	-------------------------------------

Ֆակտորինգի վաղաժամկետ մարման դեպքում տույժ չի կիրառվում

## Հետադարձ կապ

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել:  
 Հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի <https://www.conversebank.am>  
 ինտերնետային կայք, Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման  
 գրասենյակ/ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով: